№ 238 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 — 1900 — ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 № 238

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1901** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերթական լուրջ հարցերից մէկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Առաջնորդն է մեղաւորը. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նաւթային հողերի վերջին աճուրդը.

ՀԵՐԹԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՀԱՐՑԵՐԻՑ ՄԷԿԸ

Ի՞նչ միջոցներով կուզել այն միջոցների դէմ, որոնք երեւացել են Ախալքալաքի գաւառում։ Ի՞նչ միջոցներով վերականգնել գիւղերի երկրագործութիւնը և արտերը ծածկել նորից ցանքսերով։ Այս լուրջ հարցը առաջ եկաւ Գիւղատնտեսական ընկերութեան վերջին նիստում, որ նուիրված էր դժբաղդ գաւառի աղէտների նկարագրութեան և քննութեան։ Մասնագէտները ցոյց տուին մի քանի միջոցներ։ Եւ սակայն անկարող եղան դրական կերպով պատասխան տալ այն հիմնական հարցին, թէ արդեօք կարելի՞ է հացահատիկներ ցանել վնասված տեղերում թէ ոչ։

Դա կարեւոր և էական հարց է։ Միջոցների կատարած աւերմունքները կարող են տարածվել աւելի մեծ շրջաններում, քան մինչև այժմ եղել է։ Նրանք կարող են Ախալքալաքի գաւառից անցնել դէպի շրջակայ Ալէքսանդրապոլի, Արդահանի, Ախալցխայի և Բօրչալուի գաւառները և շարունակել իրանց վնասակար գործունէութիւնը։ Իսկ մի այդ տեսակ կարեւոր հարց չէ պարզաբանված բաւարար կերպով։

Ընկերութեան ընդհանուր ժողովը որոշեց խնդրել երկրագործութեան մինիստրութիւնից, որ նա ուղարկէ Ախալքալաքի գաւառը հետազօտութիւններ անելու մի հմուտ մասնագէտի, որ սկսէր դիտողութիւններ անել գարունը սկսվելուց և ուշի ուշով հետեւէր միջոցների գործունէութեան ամբողջ ամառվայ ընթացքում։

Միջոցները արդէն երկու տարի է, որ գործում են Ախալքալաքի գաւառում։ Եթէ մանրամասն մասնագիտական հետազօտութիւն կատարված լինէր աւելի վաղ, մենք արդէն այժմ կարող կը լինէինք օգտվել նրա արդիւնքներից։ Իր ժամանակին այդ բանը չը կատարվեց։ Գոնէ այժմ ընկերութիւնը աշխատէ իր որոշումը անմիջապէս իրագործել տալ և այդպիսով օգնէ հաղարաւոր գիւղացիներին էլք գտնել իրանց սոսկալի և վշտալի դրութիւնից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Թիւրքահայ գաւառական առաջնորդներից մէկը, Մուշեղ վարդապետ, հրատարակել է իր «հովուական» թուղթը, որի մասին ընդարձակ տեղեկութիւններ է տալիս «Արեւելք» լրագիրը։ Վարդապետը այդ թղթով դիմում է իր ժողովրդին եւ զանազան հարցերի առիթով տալիս է իր խրատները։ Անշուշտ, շատ ու շատ են գաւառական ցաւերը, մանաւանդ մի այնպիսի ցաւագար երկրում, որպիսին է Ասիական-Թիւրքիան։ Կան, անշուշտ, այնպիսի ցաւեր, որոնց մասին առաջնորդը չէ կարող նոյն իսկ ծպուտ հանել. բայց եւ այն ցաւերը, որոնց հրապարակ հանել մեղք չէ նոյն իսկ Թիւրքիայում, այնքան խիստ են, այնքան կսկծեցնող, որ դրանց ճար ու դարմանը ոչ առաջնորդական խրատները կարող են դառնալ, ոչ նոյն իսկ լրագրական յօդուածները։ Այսպիսի զարհուրելի ցաւերից մէկը, եթէ ոչ մեծագոյն, պանդխտութիւնն է։ Ի՞նչպէս է քայքայվում, ոչնչանում մի ժողովուրդ. ինչպէս է նա մի դանդաղ մահի առաջնորդութեամբ դիմում դէպի անխուսափելի կորուստ։ Այս սոսկալի պատկերը թոյլ գոյնով ձեր առաջն է, երբ դուք ձեռք էք առնում պանդխտութեան մի որ եւ է նկարագիր։ Ահա ինչ է գրում «Արեւելքը» Մուշեղ վարդապետի հովուականի այն կէտի առիթով, որ վերաբերվում է պանդխտութեան։

Որերորդ ծանօթ չեն այդ ցաւին բոլոր ողբալի մանրամասնութիւնները. մինչդեռ իրենց թուրք հայրենակիցը իր պանդխտութեան մէջ միմիայն չահու նպատակ մը ունի եւ Պոլիս կամ ուրիշ կեդրոն մը գացած պահուն բնաւ մտքէն չի հեռացներ իր օճախը, իր ծնողքը, կինն ու զաւակները, եւ մէկ երկու տարուան աշխատանքէ ետքը կրկին անոնց ծոցը կը փութայ կայտառ այնչափ, որչափ որ էր մեկնած ատենը, մերինները ուր որ գաղթեն, ուր որ հաստատուին, գրեթէ ամբողջովին բարոյական անկումի մը կը մատնուին։ Հոս ամեն օր աչքի առջեւ ուներնք անոնցմէ շատեր, ոմանք ցոփութեան մէջ ընկած, ոմանք խաղամոլութեամբ զբաղած եւ ուրիշներ ալ՝ որոնք բարակնալու, եւրոպականանալու ծիծաղելի մարմաջէն բռնուած՝ անագին ծախքերու կենթարկեն ինքզինքնին, չահածնին տալով հագուստի, գաւազանի եւ արդուզարդի առարկաներու, որոնք սակայն այլանդակութենէ զատ ուրիշ բան չեն տար իրենց։ Եւ անդին ծննդավայրին, հայրենի տան մէջ մատաղատի հարսը՝ որ իր ամուսնին երեսը հազիւ ամիս մը, երբեմն նոյն իսկ շաբաթ մը կամ երկու օր տեսած է, կուրծքին մանուկ մը գաված կը սպասէ անոր վերադարձին, կը սպասէ լալով, կը սպասէ տանջուելով։ Իր հետ կը սպասեն նաեւ գաղթականին ծնողքը, ծերուկ հայրն ու մայրը, որոնք ալ աշխատելու կարողութիւն չունին, եւ որոնց միակ յոյսը, միակ ապաւէնը օտարութեան գիրկը գտնուող այդ տղամարդն է։ Իզուր վարժապետի մը կամ քահանայի մը նամակներ գրել կու տան, իզուր իրենց անօգնական, անյոյս վիճակը կը պարզեն անոր, իզուր իրենց ու իր զաւակին համար հաց կը խնդրեն. երբեմն-երբեմն,—եթէ երբէք բաղդաւոր են,—կիսմանան որ քիչ մը դրամ ղրկուած է իրենց հասցէին. բայց այդչափ միայն. դրամը ձեռքերնին չի հասնիր, որովհետեւ կամ փոլիսաճին կոկորդը կանցընէ եւ կամ տակաւին տեղը չը հասած՝ արդէն իսկ գրաւուած կըլլայ առնելիքաւոր վաշխառուներուն կողմէ։

Ու տարիները կանցնին այսպէս. ամուսին մը Պոլիս եկած հաստատուած է, առանց իր հացէն տալու. ուրիշ մը Իզմիր, ուրիշ մը Եւրոպա, ուրիշ մը Ամերիկա, եւ այսպէս աշխարհի այս ու այն անկիւնները տարտղնուած են, մեծամասնութեամբ անհոգ ու անկարեկիր, եւ ընդհանրապէս կարգ մը անանուն կիներու, ատորին արարածներու հետ յարաբերութիւն հաստատած։ Կը պատահի որ երբեմն անոնցմէ հատ մը երկուք իրենց երկիրը վերադառնան, տասը քսան տարուան պանդխտութենէ մը ետքը. առողջ շատ քիչ մնացած կըլլայ անոնց մէջ, գրեթէ ամենքն ալ անբուժելի ախտերէ վարակուած, կերթան պլչկել իրենց կիները, իրենց զաւակները, ապականուած, այլասերած սերունդի մը հունտը ցանելով այն տեսակ տեղերու մէջ, ուր բնութիւնը մարդուն ամեն առաւելութիւն չնորհած է ֆիզիքապէս առողջ ու առոյգ զարգանալու։ Երբեմն ալ խեղճ կիները ամբողջ տարիներ սպասելէ, ամբողջ տարիներ իրենց ցաւին կոտանքը քաշելէ ետքը, սեւ լուրը կառնեն թէ ամուսինին մնած է օտարութեան գիրկը, ով գիտէ ինչ գարշելի ախտով մը հիւծուելէ ետքը։ Ի՞նչ կուզէք որ ընէ այդ կինը. ամուսնանալէն ի վեր տարիները տանջանքներով անցած են. կանխահասօրէն պառուցած է այդ հեւքոտ սպասումի ու տատանքի կեանքին մէջ եւ զաւակ մը ալ ունի ուսերուն վրա. ով գինքը կնութեան կառնէ։ Մուրացիկ մը ալ անշուշտ որ ժամուն դուռը արդէն իսկ գտնուածներուն պիտի միանայ, քանի որ սպասաւորութեան ալ չի կրնար ապաւինիլ. գաւառներու մէջ ամեն կին իր տանը սպասաւորն է արդէն։ Կան նաեւ ուրիշներ, որոնք ոչ նուազ արգահատելի են ատոնցմէ. տան մը տղամարդը պանդխտութեան դիմած կըլլայ եւ տարիներով ձայն ձուն չի հաներ, ընդհանրապէս սիրային ուրիշ յարաբերութիւններէ բռնուած ըլլալով. գաւառին մէջ իր կինը կը սպասէ ամիսներով, կը սպասէ տարիներով, նամակ նամակի վրա կը գրէ, ծանօթներու կը դիմէ, բայց միշտ գերեզմանային լռութիւն մը միայն կըլլայ իր դիմումներուն բովանդակ արդիւնքը։ Ի՞նչ ընէ խեղճը, մէկ կողմէ յոյսը կտրած է իր ամուսնէ կատարած աւերմունքները կարող են տարածվել աւելի մեծ շրջաններում, քան մինչև այժմ եղել է։ Նրանք կարող են Ախալքալաքի գաւառից անցնել դէպի շրջակայ Ալէքսանդրապոլի, Արդահանի, Ախալցխայի և Բօրչալուի գաւառները և շարունակել իրանց վնասակար գործունէութիւնը։ Իսկ մի այդ տեսակ կարեւոր հարց չէ պարզաբանված բաւարար կերպով։

Ընկերութեան ընդհանուր ժողովը որոշեց խնդրել երկրագործութեան մինիստրութիւնից, որ նա ուղարկէ Ախալքալաքի գաւառը հետազօտութիւններ անելու մի հմուտ մասնագէտի, որ սկսէր դիտողութիւններ անել գարունը սկսվելուց և ուշի ուշով հետեւէր միջոցների գործունէութեան ամբողջ ամառվայ ընթացքում։

Միջոցները արդէն երկու տարի է, որ գործում են Ախալքալաքի գաւառում։ Եթէ մանրամասն մասնագիտական հետազօտութիւն կատարված լինէր աւելի վաղ, մենք արդէն այժմ կարող կը լինէինք օգտվել նրա արդիւնքներից։ Իր ժամանակին այդ բանը չը կատարվեց։ Գոնէ այժմ ընկերութիւնը աշխատէ իր որոշումը անմիջապէս իրագործել տալ և այդպիսով օգնէ հաղարաւոր գիւղացիներին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԻԹԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԱՃՈՒՐԴԸ

Համաձայն մեր խոստման, մեր ներկայ յօդուածում մտադիր ենք խօսել այն առասպելական գների անմտութեան մասին, որ առաջարկված են նաւթային հողերի համար վերջին աճուրդի ժամանակ, որ տեղի ունեցաւ Բագուում անցեալ նոյեմբերի 15—17-ին։

Ընթերցողը երեւի յիշում է մեր անցեալ նամակից, որ Սաբունչիի № 27 հողի համար առաջարկված է պուդավճար 11,11 կոպ., № 28—12,8 կոպ., Բիբի-Էյբաթի № 8 համար 10,263 կ., № 10—11,27 կոպ., № 12—$12\frac{5}{16}$ կոպէկ։ Մնացած հողերի համար առաջարկած գները մենք առայ չենք բերում նախ՝ որ կըրկնութիւն կը լինէր, երկրորդ՝ նրանք այնքան էլ բարձր չեն, եւ երրորդ՝ մեր խօսքը գլխաւորապէս այդ բարձր գներ առաջարկողների մասին է։

Իւրաքանչիւր խելօք, կշռադատ եւ հեռատես վաճառական, եթէ կամենում է մի որ եւ է արդիւնաբերութեամբ պարապվել, նախ պարտաւոր է ծանօթանալ այդ արդիւնաբերութեան անցեալի ու ներկայի հետ, որպէս զի կարող լինի եզրակացութիւններ անել ապագայի մասին։ Դժբաղդաբար, նաւթային գործերով պարապվել ցանկացողները կատարելապէս մոռացութեան են տալիս իրանց, որպէս արդիւնագործի, տարրական պարտականութիւնը։ Նրանց կարծես թէ չլացրել է մի քանի բաղդաւորների վիճակը, որոնք մեծ աջողութիւն են գտել այդ գործի մէջ։

Մեզ թւում է, թէ այդ աստիճանի բարձր գներ առաջարկելու պատճառներից մէկը նախ այն է, որ նաւթային նիւթերի պահանջը օրից օր աւելանում է եւ երկրորդ՝ այն արտօնութիւնները, որ տուել է պետութիւնը ներկայ աճուրդին հող վերցնողներին։ Փորձենք պարզել այդ պատճառները։

Թէ պահանջը մեծ է, այդ մասին ամենապերճախօս կերպով վկայում են ամառվայ ամիսները, երբ նաւթային նիւթերը ազատ կերպով տեղափոխվում էին Բագուից դէպի զանազան կողմեր եւ նրանց գները աստիճանաբար բարձրանում էին։ Սակայն վրա հասաւ ձմեռը, որ ժամանակաւորապէս դադարեցրեց արտահանութիւնը կասպից ծովով դէպի Ռուսաստան, հեռու Արեւելքում չինական գործերը սուր կերպարանք ստացան եւ դարձեալ դադարեց արտահանութիւնը Բաթումից դէպի Արեւելքի շուկաները, որովհետեւ եղած շոգենաւերը պատերազմական մթերքներ տեղափոխելու սկսեցին ծառայեցնել, իսկ Վլադիկավկազեան գիծը դեռ այնքան կանոնաւորված չէ, որ կարողանայ արտահանել ցանկալի քանակութիւն։ Եւ սակայն արդիւնաբերած քանակութիւնը աւելանում է եւ աւելանում։

Արտահանելու ճանապարհ չը կայ, չը կան նաեւ մեծ պահեստներ։ Ի՞նչ հետեւանք կունենան այդ հանգամանքները։ Շատ պարզ է գների վայր ընկնելը։ Այդպէս էլ եղաւ։ Սեպտեմբերին դեռ 18 կոպէկ էր նաւթի պուդը, իսկ այժմ $11\frac{1}{2}$—12 կոպ.։ Եթէ տեղի չունենային վերեւ յիշած հանգամանքները, հազիւ թէ այդ աստիճան ընկնէին գները։ Ընդհանուր պահանջը մեծ է, իսկ արտահանութեան միջոցները սուղ։ Մեզ թւում է, որ եթէ փոխադրական գործը աւելի բարեյաջող պայմանների մէջ դնվի, նաւթի գները եթէ չաւելանան էլ, բայց չեն էլ ընկնի, որովհետեւ, որպէս վառելիք, նաւթային արդիւնքները չունեն արժանաւոր ախոյեաններ։ Մեզ յայտնի վառելանիւթերից փայտը, քարածուխը, տորֆը եւ այլն, ոչ մէկը չէ կարող մրցել նաւթային արդիւնքների հետ։ Եթէ այսօր Ռուսաստանի բազմաթիւ գործարաններից շատերում դեռ տեսնում ենք, որ վառելիքի համար գործադրում են փայտ կամ քարածուխ, այդ չէ նշանակում, թէ այդ տեղերում նաւթային արդիւնքները չեն կարող մրցել այդ նիւթերի հետ. ոչ, այլ արտահանական միջոցները այնքան սուղ են, որ չեն կարող հասցնել այդ տեղերը նաւթային արդիւնքներ վառելիքի համար։ Եւ մթէ կարելի է մի բօպէ ենթադրել, թէ նաւթի գների այժմեան անկումը որ եւ է կապ ունի ներկայի ընդհանուր պահանջի հետ։ Երբէք ոչ։ Շատ էլ պահանջ կայ, բայց ինչպէս հասցնել ուզողին, քանի որ փոխադրական միջոցները շատ քիչ են։

Ահա ինչու մենք կարծում ենք, որ այդ պարոնները նախ քան առաջարկելը այդ աստիճան բարձր գներ, բարոյապէս պարտաւոր էին մտածել նաեւ արտահանական միջոցների մասին, որովհետեւ այդ հանգամանքը ամենաուժեղ պայմաններից մէկն է, որ միշտ ազդելու է գների վրա։

Մենք վերը յիշեցինք, որ ներկայ աճուրդին նաւթային հողեր վերցնողներին տրված են պետութեան կողմից արտօնութիւններ։ Ահա

նին վերադառնալէն, միւս կողմէ ալ եկեղեցին նորէն ամուսնանալու արտօնութիւնը կը զլանայ իրեն։ Ու կը տառապի այդպէս տարիներով, փրկարար ու անուշ մահէ մը ակնկալելով այն բանը՝ զոր չէր գտած կեանքի մէջ,—այսինքն պուտ մը հանգստութիւն։

Այս սոսկալի իրականութիւնը փոխելու համար ինչ ունենք մենք անելու։—Ոչինչ, բացի վարդապետական խրատներից։ Ահա ինչ է գրում Մուշեղ վարդապետը.

«Մի ուշանաք ձեր պանդխտութեան մէջ, իմ եղբայրներս, ու ստէպ ստէպ դարձէք ձեր քաղաքը, ու ձեր գիւղերը, որոնց մէջ ընտանեկան կարօտն ու սէրը ձեզի կը սպասեն։ Եթէ դրամ չահած գաք, պիտի ընդունին ձեզ ձեր զաւակները, եթէ ձեռնունայն գաք, նորէն պիտի ընդունին ձեզ սիրով, բաւական է որ ձեր պատիւին ու առողջութիւնովը դառնաք։ Ով որ առողջ է ու պատուաւոր, անիկա անօթի չի մնար. քիչ մը կուշտ, քիչ մը անօթի կեանքը՝ պարկեշտութեան մէջ՝ շատ աւելի քաղցր է քան յղփացած ու անպարկեշտ կեանքը։ Սաղ փորձը ունիք դուք ձեր անձին վրա. հիմա որ կը շահիք ու կը ծախսէք, բայց տակաւին սրտի հանգստութիւնը չունիք, ճանչցէք ձեր պարտականութիւնները ու դարձէք ձեր զաւակներուն մօտ, ձեր ընտանիքներուն մօտ եւ ուրախութիւնով, երջանկութիւնով ու քրիստոնէական օրհնութիւնով լեցուն սիրտ մը պիտի ունենաք։ Երբ յոգնած ու քրտնած գաք ձեր հայրենի տունին սեմը, սրտի ինչ յուզումներ, ուրախութեան ինչ արցունքներ չը պիտի թափէք, մեռնելէ առաջ ձեր սիրելիները գտած ըլլալնուդ համար։ Ձեր հոգեկան այդ յուզումները, ձեր աղօթքը պիտի ըլլան, գոհունակութեան ու երախտագիտութեան աղօթքը դէպի Աստուած. ձեր գիրկընդխառնումին մէջ պիտի մոռնաք պանդխտութեան երկարաձիգ ու քաշքշուած տառապանքը, յոգնածութիւնը, նեղութիւնները ձեր տարաշխարհիկ օրերուն, ու պիտի ըսէք. «Բաւական է Տէր, որ քու առջեւդ շնորհ գտայ»։

Գեղեցիկ են, այո, խրատները, երբ գալիս են կեանքի դառն երեւոյթների դէմ միջոցներ առաջարկելու։ Բայց խրատներով իրականութիւն չէ փոխվում։ Պանդխտութիւնը պատժական, տնտեսական թշուառ պայմանների արդիւնք է։ Ի՞նչ կարող են անել մեր խրատները այդ պայմանների դէմ։ Ցաւալի, յուսահատական դրութիւն. միայն գեղեցիկ խօսքեր, միայն հոետորութիւն ենք կարողանում հանել մեր կեանքը կրծող, մեր գոյութիւնը ոչնչացնող հրէշաւոր երեւոյթների դէմ...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
XXVII

«Մշակը» հաղորդեց, վերցնելով «Տարազ» շաբաթաթերթից, այն տխուր լուրը, թէ մեր յայտնի մանկավարժ պ. Սեդրակ Մանդինեան, որ գնացել էր Դանիա բժշկվելու, կուրացել է երկու աչքով։

«Մշակը», որ տարիների ընթացքում շատ դէպք է ունեցել քննադատելու պ. Ս. Մանդինեանի գործունէութիւնը եւ հայեացքները, այս տարի, նրա մանկավարժական գործունէութեան քսանհինգամեակի առիթով, յայտնեց իր յարգանքը այդ երկարամեայ աշխատաւորին, ցոյց տալով դրանով, որ իր քննադատական վերաբերմունքը դէպի նա դրդված չէ եղել երբէք կոյր ատելութիւնից եւ որ ինքը, ինչպէս միշտ, գիտէ յարգել արժանիքը լուրջ եւ համոզված հակառակորդների մէջ։

Այժմ, երբ պ. Ս. Մանդինեանին պատահել է ամենայուզիչը, ամենատրագիկականը բոլոր անբաղդութիւններից, ուրիշ կերպ չէ կարող լինել, ի հարկէ, «Մշակի» վերաբերմունքը։ Բայց ես այստեղ խօսում եմ ոչ միայն իբրեւ աշխատակից «Մշակի», եւ ոչ միայն իբր պ. Ս. Մանդինեանի նախկին աշակերտ, այլ եւ առհասարակ իբրեւ մի անդամ հայ հասարակութեան, որին պ. Ս. Մանդինեան տարիների ընթացքում բազմաթիւ ծառայութիւններ է մատուցել իր ոյժերի չափով եւ իր համոզմունքի համեմատ։

Անշուշտ չի լինի ոչ մի հայ, որ ցաւ չը զգայ, լսելով պ. Ս. Մանդինեանին պատահած անբաղդութեան մասին, բայց անկասկած է եւ այն, որ այդ միահամուռ ցաւակցութիւնը կարող է միայն բարոյական սփոփանք պատճառել կուրացած հասարակական գործիչին, մինչդեռ նա, բացի այդպիսի սփոփանքից, կարիք ունի եւ նիւթական միջոցների։

Նիւթական նեղ դրութիւն, բազմանդամ ընտանիք եւ կուրացած աչքեր—կարելի է արդեօք երեւակայել աւելի յուզիչ դրութիւն, կարելի է արդեօք երեւակայել մի ուրիշ դրութիւն, երբ աւելի մեծ յանցանք կը լինէր սահմանափակվել պլատոնական ցաւակցութեամբ։

Ասում են, էջմիածինը վճռել է տարեկան 500 ր. թոշակ նշանակել պ. Ս. Մանդինեանին։ Եթէ այդ ճիշդ է, այդ պատիւ է բերում էջմիածնին։

Բաւական է, ինչքան ցոյց տուինք, որ յարգել գիտենք հանգուցեալներին։ Մի քիչ էլ ապացուցանենք, որ գնահատել գիտենք եւ կենդանի գործիչներին, եւ թող ամեն մարդ, որ իրան նուիրում է հասարակական գործունէութեան մեր խեղճ հասարակութեան մէջ, համոզվի, որ երբ, իր փչոտ ճանապարհի վերջում, հայ գործիչին հալածող անգութ ճակատագիրը կիջեցնի նրա գլխին իր վերջին հարուածը, նա կը հանդիպի իր շուրջը հաւակիր սրտեր, որոնք բարախել գիտեն վաստակաւոր գործիչների համար, եւ գլուխներ, որոնք խոնարհվել գիտեն անբախտութեան առաջ։

Տ. Ե.

ԱՌԱՋՆՈՐԴՆ Է ՄԵՂԱՒՈՐ
(Նոր-Նախիջեւանից)

—

Առաջնորդն է մեղաւոր, մեղաւորը «առաջնորդի մի բարեկամն է»։ Մուշէ վարդապետը, ոչ, մեղաւոր չէ, անմեղ է, անմեղ, իբրեւ Աստուծու գառը։

Մուշէին բարձրացնում են մեր առաջնորդին ցածացնելու. համար։ Մեր առաջնորդը «խանութեան շրջանի ծունդ է», «փաշա» է, «խան» է։ Ահա ինչ են գրում մեր ստախօս գրչակները, որ համարձակութիւն եւ քաջութիւն չունեն սակայն ստորագրելու իրանց անունները, անուններ, որ ամեն ինչ կը պարզէին մեզ։

Մեր սրբազան առաջնորդի բոլոր մեղքը նրանումն է, որ գիտցաւ ճանաչել Մուշէ վարդապետի իսկական դոյնը։ Միւս մեծ յանցանքն էլ մեր առաջնորդի այն է, որ ցանկանում է վերջ դնել այն խռովութեան, որ տիրում է մեր եկեղեցական հոգաբարձութեան ժողովներին, շնորհիւ Մուշէ վարդապետի երկու երեք բարեկամների։

«Приаз. Кр.» լրագրում պ. Մ. Բերբերեանը յօդուած էր գրել եւ այդ յօդուածում մեր հոգեւոր դպրոցի կարգերի մասին ծուռ մուռ տեղեկութիւններ էր տուել։ Տեսուչը դիմում է դատաստան, մեղադրելով պ. Բերբերեանին դիֆամացիայի մէջ։ Սխալ քայլ էր, բայց պ. տեսուչը երկրորդ սխալն էլ արեց, նա յետառաւ դանդատը։ Էշ նստելը մէկ ամսթ, իջնելը ուրիշ ամսթ, ասում են մեզանում, իսկ պ. տեսուչը իջաւ էշից հրապարակի միջում։ Ձենք արդարացնում պ. տեսչին։ Անցնենք այժմ հայր Մուշէին։ Որպէս զի պ. Բերբերեանը ձեռքում թուղթ ունենայ դատաստանի առաջ, Մուշէ վարդապետը խորհուրդ է կազմում եւ հրաւիրում է պ.պ. Զուբարեանին, Կ. Խօջայեանին եւ Կ. Թիթրեանին։ Պէտք է ասել, որ պ. տեսուչը մի ժամանակ մեծ յանցանք է գործել եւ այդ յանցանքը պ. Մ. Բերբերեանը եւ նրա հետ պ.պ. Զուբարեան, Կ. Խօջայեան եւ Կ. Թիթրեան երբէք չեն ների։ Մոտեցէք, ես ձեր ականջին ասեմ կամաց, խնդրեմ մարդու մի պատմէք. պ. տեսուչը... պ. Մինաս Պալապանեանի սանահայրն է։ Հասկացա՞ք այժմ։ Ո՞չ։ Պ.պ. Մինաս Պալապանեան եւ Մինաս Բերբերեան եւ ընկերութիւնը (պ.պ. Զուբարեան, Կ. Խօջայեան եւ այլն)—այլասեռ բեւեռներ են։ Լաւ կշռեցէք,—Մինաս Պալապանեանը պ. տեսչի կնքահայրն է։ Մեզանում վրէժ հանում են որդոց որդի, մենք թշնամանում ենք մեր անձնական թշնամու ազգականներին, բարեկամներին, ծանօթներին եւ... սանահայրներին։ Գիտէք պատճառը,—մենք փոքր մարդիկ ենք, իսկ փոքր մարդը փոքր ոգի ունի եւ ոչ չը գիտէ, որ փոքր ոգիները աշխատում են աշխարհը լցնել միայն իրանց եսովը...

Սրբազան առաջնորդը լսել էր, որ խորհրդի վճիռը սարքած էր եւ առաջնորդը ցանկացել էր տեսնել արձանագրութիւնը. այդ նրա սուրբ պարտականութիւնն էր։

Եթէ հոգաբարձութեան նախագահ հայր Մուշէն եւ տեսուչը իրար միս են ուտում, մեթէ մեղաւոր է մեր առաջնորդը։ Հանգիստ թողէք նրան եւ նրա «բարեկամին» եւ շարունակեցէք ձեր խաղը՝ զոհը թող փառաբանէ հ. Մուշէին, հ. Մուշէն զոհին...

Գր. Զալիսուչեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Դեկտեմբերի 9-ին

Սեւ օրեր են... Ամեն տեղ ցաւ, ամեն տեղ լաց, արտասուք։

Ձմեռը իր խիստ պահանջներով վրա է հասել, իր սարսափելի պատկերով չէմքդ է կոխել։ Ամենից առաջ հաց չը կայ, թանգութիւն է։ Մօտ 4 տարի առաջ մեզանում ալիւրի պուդը ծախվում էր 70—80 կոպէկով, մի գին, որ թէեւ շատ ցածր էր ներկայիս հետ համեմատելով՝ այնուամենայնիւ մատչելի էր ոչ-ամենքի համար. իսկ յետոյ՝ շնորհիւ մի քանի իրար յաջորդող տարիների երաշտութեան, կարկուտի եւ մշտական անձրեւային եղանակի՝ ալիւրի պուդը սկսեց ծախվել 1 ր. 40—1 ր. 50 կոպէկով, մի գին, որ մատչելի է համարեա շատ քչերի համար։ Ճիշդ է, ոչ ոք առանց հացի չէ մնում. ամենքն էլ առնում են այդ գնով, սակայն դրա փոխարէն կրճատում կամ բոլորովին մի կողմ են թողնում ուրիշ ոչ-պակաս անհրաժեշտ կարիքներ։ Խնայում են ոտնամանից. ձմեռային դաժան ցրտերին հայր ունեցող եւ այն էլ աշխատաւոր հայր ունեցող երեխան փողոցում ցեխերի, ձիւնի մէջ ման է գալիս ծակ ոտնամանով, իսկ այդ հանգամանքը, ի հարկէ, վնասում է առողջութեանը։

Խնայում են հագուստից. շատ երեխաներ, ի նկատի ունեցէք, դարձեալ աշխատաւոր, առողջ ծնողների երեխաներ շրջում են փողոցում մի ամառնային չթէ շապիկով, բարակ, ցրտութիւնը անցկացնող, նոյն իսկ ճղված շապիկով։ Խնձերը մերթ վազում են, մերթ իրար հրում, մերթ սառած-փէտացած ձեռներին փչում, որպէս զի մի քիչ գոնէ տաքանան, բայց այդ էլ շատ չէ օգնում, սառնամանիքը իր ազդեցութիւնը անում է։ Եւ ահա, ինչպէս տեսնում էք, ոչ ոտնամանի եւ ոչ հագուստի խնայողութիւնը էժան չէ նստում խեղճ ծնողի վրա։ Այդ դեռ աշխատանք ունեցողների դրութիւնն է, հապա որքան սարսափելի, դաժանական է այն բազմաթիւ խեղճերի դրութիւնը, որոնք ոչ հայր ունեն, ոչ խնամող եղբայր, ոչ բարի ազգական եւ ոչ կարեկից հարեւան։ Այդ մասին աւելի լաւ է լռել... Դրսից մտէք տուն. բնակարանը խոնաւ է, ցուրտ. պատուհանները ապակի չունեն. դրանց ծառայութիւնը կատարող պատառոտված թղթերի արանքներով ցուրտ քամին հեշտութեամբ է տուն մտնում։ Դռները խախուտ են, ջարդված. քամին ճեղքերով չարունակ զզզում է եւ աւելի սուր, աւելի մղկտեցնող կերպով ծակում մարդու մարմինը։

Բայց յիշած դառնութիւնները, հայի, փայտի, բնակարանի ցաւերը էլ աւելի անտանելի են դառնում, երբ ընկերանում են տարափոխիկ հիւանդութիւնների հետ։ Ահա երեք ամիս է՝ ինչ կարմրուկը եւ սկարլատինը բազմաթիւ զոհեր են տանում մեր մատաղ սերնդից։ Հիւանդանում են մանուկները, հիւանդանում են չափահաս երեխաները, հիւանդանում են եւ 16 տարեկան պատանիները։ Մնոնում է սիրելի Ժօրժիկը միայն բարոյական ցաւ պատճառելու նոր անբախտացած բախտաւոր մօրը, մեռնում է գեղեցիկ Վարիան՝ զրկելով հօրը փոքրիկ աղջկայ փափկիկ թշերը համբուրելով զուարճութիւնից. մեռնում է եւ «մինուճար» Գէորգը, ընտանիքի միակ յոյս Սարգիսը ոչ թէ միայն բարոյական խորը ցաւ թողնելով այրի-անբախտ մօր սրտում, այլ եւ նիւթական անփոխարինելի զրկանք պատճառում իր յոյսով ապրող լուսցարար մօրը, օտարների թոնրի կողքերում քաշ եկող ծնողին։ Առաջինները մեռնում են փափուկ անկողնում, քնքոյշ եւ հոգատար ծնողների խնամքի տակ, բժշկի ներկայութեամբ, իսկ վերջինները՝ նրանք չեն մեռնում, այլ զոհվում են ցուրտ բնակարանում, ցնցոտի անկողնում, հեռու հոգատար ձեռքերից, բժշկի օգնութիւնից, անտեղ, անխնամ, անդարման... Մեր գաւառական կեանքը լի է այսպիսի մահերով։ Լայն ասպարէզ կայ թէ բարեսիրտ ուսեւորների եւ թէ մարդասէր բժիշկների առաջ...

Սիմ. Յակոբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալքալաք, դեկտեմբերի 1-ին

Թոյլ տուէք վերջնական մի քանի խօսք ասել ձեր թղթակիցներին ընդհանրապէս եւ Սա-

---

ինչի մէջ են կայանում այդ արտօնութիւնները։ Ցաւանի է, որ աճուրդով տրվող իւրաքանչիւր հողի համար նշանակված է տարվայ ընթացքում արդիւնաբերածի մինիմալ քանակութիւնը։ Նախընթաց աճուրդների ժամանակ վերցնողներն ունէին այն արտօնութիւնը, որ եթէ այդ մինիմալ քանակութիւնից աւելի արդիւնաբերէին, նրանք վճարում էին երկրորդ մինիմալ քանակութեան համար մի քառորդ կոպէկ պակաս սկզբնական պուդավճարից, երրորդ մինիմալ քանակութեան համար $^1/_2$ կոպ. պակաս սկզբնական պուդավճարից, այնպէս որ իւրաքանչիւր աւել քանակութեան համար պուդավճարը պակասում է $^1/_4$ կոպ., մինչեւ որ նա կը հասնէր սկզբնական առաջարկածի կիսի չափին։ Իսկ այժմ պակասեցնելու չափը նշանակված է 10%, այնպէս որ եթէ հողի համար առաջարկված է 10 կոպ. պուդավճար, նա երկրորդ մինիմալ քանակութեան համար կը վճարի 9 կոպ. եւ ոչ $9^3/_4$ կոպէկ, ինչպէս առաջ էր եւ բացի դրանից, եթէ արդիւնագործը կարողացաւ մինիմալ քանակութիւնից 12 անգամ աւելացնել իր արդիւնաբերած քանակութիւնը, այն ժամանակ նա պետական գանձարանին վճարում է միմիայն այն քանակութեան համար, ինչքան արդիւնաբերում է։ Մինչդեռ առաջվայ աճուրդով տրված հողերի համար պէտք է վճարել մինիմալ քանակութեան համար, չը նայելով այն բանին, թէ արդեօք այդքան արդիւնաբերվում է, թէ ոչ։

Ահա այդ արտօնութիւնները բաւական մեծ զարկ տուին բարձր գներ առաջարկելուն եւ իւրաքանչիւր հող վերցնողը մտածում էր, որ իր արդիւնաբերութիւնը կաւելացնի մի քանի անգամ եւ այդպիսով միջին թւով աւելի քիչ կը վճարէ, քան սկզբնական նշանակած պուդավճարը։

Այժմ փորձենք պարզել, արդեօք ինչ պատկեր կառաջանայ, եթէ մեր Նոր Նաւթագործները այդ դաղափարով առաջնորդվեն։ Ներկայումս արդիւնաբերած նաւթի քանակութիւնը հասնում է մօտ 600 միլիոնի։ Այդ քանակութիւնը մենք չենք կարողանում արտահանել։ Վերջին աճուրդի ժամանակ տրված հողերի մինիմալ արդիւնաբերածի քանակութիւնը պիտի լինի 26,5 միլիոն։ Որպէս զի միջին թւով քիչ պուդավճար տան պետական գանձարանին, նրանք, ինչպէս մենք վերեւ յիշեցինք, աշխատելու են արդիւնաբերելիք քանակութիւնը մի քանի անգամ աւելացնել, ենթադրենք մօտ վեց անգամ, ուրեմն մենք կունենանք մօտ 153 միլիոն պուդ նոր նաւթ։ Իսկ եթէ ընդունենք արդիւնաբերութեան աճումը մօտ 15%, երկու տարուց յետոյ մեր արդիւնաբերած քանակութեան չափը կը հասնի մօտ 950 միլիոն պուդի։ Այդ քանակութիւնը հարկաւոր է արտահանել, բայց ինչպէս, քանի որ ճանապարհները հազիւ կարողանում են փոխադրել միմիայն 600 միլիոն պուդ, ուրեմն անվաճառ մնալու է մօտ 350 միլիոն։ Եթէ շատ զօռենք մեզ, դիցուք կարողանանք տեղափոխել 150 միլիոն պուդ էլ աւել, ուրեմն դարձեալ կը մնայ 200 միլիոն պուդ։ Մենք չունենք մեծ պահեստներ, որ կարողանանք պահել այդ մեծ քանակութիւնը աւելի պատեհ ժամանակի համար։ Նաւթը հրդեհի կողմից վերին աստիճանի վտանգաւոր ապրանք է, հետեւապէս կամայ ակամայ մենք աշխատելու ենք մի կերպ ծախսել։ Այդպիսի դրութիւնը կառաջացնէ գների անկումը մինչեւ այն ժամանակ, երբ տեղափոխելու միջոցները կարող են պահանջին բաւականութիւն տալ։

Բայց այդպիսի յարմարութիւնները շուտ չեն ստեղծվում, տարիներ է քաշում։ Ուրեմն մեր բարձր գներ առաջարկող պարոնները դարձեալ ընկնում են անելանելի դրութեան մէջ, վնասը վնասի վրա է բեռնվում։ Մեզ թւում է, որ եթէ նաւթի գները միջին թւով լինեն 15—16 կոպէկ, դարձեալ դժուար կը լինի նրանց համար արդիւնագործել այդ հողերը։ Առ այժմ այդ պարոնները թղթի վրա հաշուելով, դուրս են բերում իրանց ընկերների առաջ ահագին եկամուտներ, բայց երբ գործի մէջ կը լինեն, այն ժամանակ կը համոզվեն, որ մեր ասածները ճիշդ են եւ արդիւնք դառն փորձառութեան։

Ցաւալին հէնց այդ է, որ մեր նոր նաւթագործները այդ պարագաների մասին չեն մտածում, հէնց ասում են՝ Մարկոսը առանց մի կոպէկի գնաց Բագու եւ այժմ միլիոններ ունի, ինչու մենք փող ծախսելով չենք կարող միլիոններ վաստակել։ Եթէ այդպէս մտածէր մի տգէտ, անկիրթ վաճառական, բաղդի բերմամբ հարստացածը, դեռ նրան ներելի է, բայց ինչով բացատրել այն, որ այդպիսի բարձր գներ առաջարկողների մէջ կան նաեւ մի շարք լեռնային ինժեներներ, որոնք տարիներ շարունակ եղել են Բագու եւ ծանօթ են նաւթարդիւնաբերական գործին։ Խոստովանում եմ, որ դժուարանում եմ բացատրել այդ պարոնների այդ տեսակ վարմունքը, որովհետեւ նրանք շատ լաւ գիտեն, որ Մարկոսների ժամանակը անցել է եւ անվերադառնալի է. այժմ թէ փորելու, թէ արդիւնագործելու եւ թէ արտահանելու պայմանները չափազանց դժուարացել են։

Ֆ. Մարդանեան

լիմեանին մասնաւորապէս։ Ազնուութեան մասին այդչափ տաք-տաք խօսող պարոնները այնչափ անազնիւ գտնվեցին, որ գործը քննվելուց առաջ ինձ դէմ ամեն տեսակ թղթակցութիւններ գրեցին, իսկ երբ գործը իրանց ցանկութեան հակառակ վերջացաւ, գոնէ մի փոքրիկ ծանուցումով չը յայտարարեցին հասարակութեան, թէ ինչ է վճռել դատարանը։

Նախ եւ առաջ ինձ դատապարտում էիք վաչխառուութեան մէջ. անունս տապալելով միթէ ուզում էիք փառք վաստակել իմ տանջանքով։ Բայց օրէնքը սուրբ է, նրա առաջ ամենքը հաւասար են, նա վերջնականապէս ճանաչեց, թէ ով է մեղաւորը։

Ապա անուանարկում էք ինձ ինչ որ «մութ միջոցների» մէջ. բայց դուք չատ լաւ գիտէք, պ. Սալլիւմեան, թէ ինչ «մութ միջոցներ» են այդ եւ թէ ես որքան դեր ունէի այնտեղ։

Նոյն կերպ մի պարոն արատ է ձգում հօրս վրա, մեղադրելով նրան եւս ինչ որ մութ միջոցի մէջ։ Ողորմելի բամբասանք. միթէ ամենահասարակ խելքն անգամ չի ընդունի, որ ազնիւ բան է մարդասպանին արդարադատութեան ձեռք յանձնելը։

Ինչու համար, ասացէք խնդրեմ, Դարբինովը անցած ամսի 26-ին իր դատը յետ առաւ, տեսնելով որ իմ վկաներս գործի իսկական կորիզը պէտք է հանէին։ Այստեղ էլ լռենք, այստեղ էլ ակներեւ չէ ձեր ինչ լինելը։

Ուրեմն ես բոլորովին արդար ճանաչվեցի վաչխառութեան մեղադրանքի մէջ, եւ «մութ միջոցների» դիմելը ուղղակի ձեր կրքի արդիւնքն է։ Եթէ ես լինէի մի շահամոլ մարդ, եթէ ինձ համար ոսկիները աւելի յարգ ունենային քան պատիւս, ես դատարանի վերջնական վճռից յետոյ կը լռէի, որովհետեւ այնտեղ արդարացայ։

Բայց այժմ էլ հրաւիրում եմ ձեզ՝ եկէք դատի թէկուզ մի ինտելիգենտ անձնաւորութեան մօտ. թող այն անձը մեզ հարց ու փորձ անէ եւ վերջնականապէս ցոյց տայ, թէ մեզանից ով ինչ է։ Ցոյս ունեմ, որ այնտեղ կը բացվի, պ. Սալլիւմեան, թէ աւելի ձեզ կը յարմարի ձեր յիշած եւ ձեր ախորժակին յարմար «կատուի եւ մկան» արածը։

Յակոբ Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ վաղը, կիրակի, դեկտեմբերի 17-ին, ցերեկվայ ժամի 1-ին, Թիֆլիսի շերամապահական կայարանում տեղի է ունենալու կովկասեան շերամապահների եւ մետաքսավաճառների առաջին համաժողովը, որի նիստերին կարող են ներկայ լինել եւ կողմնակի անձինք։

—

Յիշեցնում ենք, որ վաղը, կիրակի, դեկտեմբերի 17-ին, Թիֆլիսի ժողովարանում կը կայանայ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան պարահանդէսը։ Ցոյս ունենք, որ հասարակութիւնը կարողութիւն կը տայ ընկերութեան ունենալու այդ պարահանդէսից լաւ եկամուտ եւ այդպիսով կօգնի ընկերութեան մտեսական միջոցների աւելանալուն։

—

Խորէն եպիսկոպոս Ստեփանէի մահվան առիթով, բացի «Մշակի» նախկին համարներում տպվածներից, մենք ստացանք յաւակցական հեռագիրներ Նոյնպէս եւ Կազանի համալսարանի հայ ուսանողներից եւ Ղզլարի հասարակութիւնից։

—

Մեզ հաղորդում են Պարիզից, որ այնտեղի լրագիրները մեծ գովասանքով են խօսում մեր հայրենակից Գէորգ Բաշինջաղեանի նկարների մասին։ Ի միջի այլոց «La plume» պատկերազարդ կիսամսագիրը հետեւեալ խօսքերով է վերջացնում իր փոքրիկ քննադատական ակնարկը. «Գ. Բաշինջաղեանի արուեստը գռեհիկ չէ ամենեւին։ Պ.պ. Զաքարեանի եւ Էդգար Շահէնի արուեստների հետ միասին, նա պատիւ է բերում իր երկրին»։

—

Վրաց թատրոնում այժմ ամեն հինգշաբթի տեղի են ունենում դերասանների բենեֆիսները։ Ամսիս 14-ին կայացաւ դերասան Գեղեվանովի բենեֆիսը. բենեֆիցիանտը ընտրել էր երկու պիէս—«Ճիրաններ» Պոլ Էրվիէի դրաման եւ «Բարեկամ Ֆրից» Էրկման Շատրիանի կամեդիան. «Ճիրանները» ներկայացնում է մի բողոք ապահարզանին վերաբերեալ նոր կանոնների դէմ Ֆրանսիայում, որոնց խստութիւնը առաջ բերեց մի շարք գրական եւ բեմական գրուածքներ։ Հեղինակը ցոյց է տալիս, որ ամուսիններից մէկի մերժումը՝ տալ ապահարզան միւսին, դնում է վերջինին անելանելի դրութեան մէջ եւ հեղինակը վերջացնում է պիէսը այն վայրկեանին, երբ սկսվում է նրա հոգեբանական հետաքրքրութիւնը։ Այս պիէսի համար յատկապէս հրաւիրված էին Քոթայիսից օր. Զխէիձէ եւ պ. Ալէքսէեվ—Մեսխիեվ. թէ պիէսը, թէ դերասանների խաղը մեծ բաւականութիւն պատճառեցին հասարակութեանը։ Ինքը, բենեֆիցիանտը, դուրս եկաւ «Բարեկամ Ֆրիցի» մէջ, Դաւիդ բարբիի դերում. Էրկման Շատրիանի այս պիէսը մի խրատական կոմեդիա է։ Հեղինակը զինվում է այն հանգամանքի դէմ, որ սպառնում է Ֆրանսիային այլասերում եւ քարոզում է ամուսնական կեանք։ Այս պիէսը գրականական տեսակէտից վատ չէ, բայց բեմական կողմից տաղտկալի եւ ձգձգված է. այդ տեսակ պիէսների համար հարկաւոր է անպայման լաւ անսամբլ եւ բեմական սարք, որ կարողանայ սպասած տպաւորութիւնը տալ։ Գլխաւոր դերերը կատարում էին՝ Ֆրիցինը—Շատիրով, Դաւիդինը—Գեղեվանով եւ Սիւզէթինը—տիկին Գարգարեանի, որոնք իրանց խաղով նոյն իսկ չը կարողացան ծածկել պիէսի պակասութիւնները եւ երկարութիւնը։ Թատրոնը լիքն էր հասարակութեամբ, որը սիրով ընդունեց բենեֆիցիանտին եւ մատուցեց ընծաներ։

—

Դաշնակահար Եակիմովսկայա, որի կոնցերտը նշանակված է այսօր, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, Ռուբինշտէյնի աչքի ընկնող աշակերտուհիներից մէկն է։ Նա տուել է բազմաթիւ կոնցերտներ եւրոպական զանազան քաղաքներում։ Երաժշտական քննադատութիւնը գովասանքով է խօսում նրա նուագի մասին։ Նա մեծ հմտութեամբ նուագում է այնպիսի կլասիկական գրուածքներ, ինչպիսին են Մոցարտի, Բէթհովէնի, Հայդնի ստեղծագործութիւնները։ Նրա գնահատելի արժանաւորութիւնները համարվում են՝ նուագի նրբութիւնը, քնքշութիւնը եւ արտայայտիչ բնաւորութիւնը։

—

«Рус. Вѣд.» լրագրում տպագրված է հետեւեալ թղթակցութիւնը Թիֆլիսից. «Այստեղ քիչ ժամանակ առաջ վախճանվեց հայկական հոգեւոր եւ հասարակական ամենանշանաւոր գործիչներից մէկը—Խորէն եպիսկոպոս Ստեփանէ։ Հանգուցեալը Մոսկվայի համալսարանի սան էր. ուսումն աւարտելուց յետոյ նա մի կարճ ժամանակ պարապում էր ուսուցչութեամբ. ապա, իր ժողովրդին աւելի մօտ լինելու եւ նրա կարիքներին աւելի լաւ ծանօթանալու նպատակով, նա մտաւ հոգեւորականների շարքը։ Նրա մեծ ձիրքերը, ահագին կազմակերպող տաղանդը, փայլուն պերճախօսութիւնը շատ շուտով ժողովրդականացրին նրա անունը ինչպէս հայ առաջադէմ ինտելիգենցիայի շրջանում, այնպէս էլ ժողովրդի մէջ։ Ստեփանէն իր կեանքի նպատակ էր դրել մաքառել հայ հոգեւորականութեան տգիտութեան եւ յամառ անշարժութեան, նոյնպէս եւ հայ բուրժուազիայի եսամոլութեան դէմ, որի մէջ նա իր հզօր պերճախօսութեամբ կարողանում էր մարդասիրական զգացմունքներ զարթեցնել։ Առանձնապէս լայն եւ բազմակողմանի էր նրա գործունէութիւնը թիւրքական կոտորածների ժամանակ։ Նրա քարոզներից յետոյ բազում հաւաքվում էին խոշոր գումարներ յօգուտ վնասվածների։ Բայց նրա ձգտումները չը հակացվեցին էջմիածնում եւ նա իր կեանքի վերջին օրերը անցկացրեց ակամայ հեռացած հասարակական գործունէութիւնից եւ վանական առանձնութեան մէջ Թէօդոսիայի մօտ։ Այդտեղից նա դուրս էր եկել մահվանից ընդամենը մի քանի օր առաջ։ Ռուսաստանի համարեա բոլոր քաղաքներում եւ գիւղերում կատարվեցին նրա համար հոգեհանդիստներ եւ հայ լրագիրները դեռ շարունակում են տպագրել տեղեկութիւններ նոր հոգեհանդիստների մասին, որոնք կատարվում են անժամանակ վախճանված տաղանդաւոր գործիչի յիշատակին։

—

«Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, դեկտեմբերի 10-ին. «Այսօր կատարվեց Ս. Սօվետովի գրական-գիտնական գործունէութեան 50-ամեայ յօբելեանը։ Յօբելեարին շնորհաւորութիւններ մատուցին բազմաթիւ պատգամաւորութիւններ։ Մոսկվայի գիւղատնտեսական ինստիտուտի կողմից ներկայացուցիչ էր պրոֆէսոր Բոստովցեվ։ Երկրագործութեան մինիստր Երմոլով դարձաւ յօբելեարին մի ճառով, որի մէջ թուեց նրա մատուցած ծառայութիւնները գիտութեան եւ ռուսական գիւղատնտեսութեան։ Յօբելեարին ողջունեց նաեւ պրոֆեսոր Ֆամինցին»։

—

Ռուսաց սինոդը ժողովրդական տարրական կրթութեան կարիքների համար առաջիկայ տարվայ ընթացքում խնդրում է պետութեան գանձարանից $3\frac{1}{2}$ միլիոն ռուբլի։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը ներկայումս մշակում է միջոցներ, որոնց նպատակն է պաշտպանել երկաթուղիներով ճանապարհորդողներին կողոպտումներից։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ներկայ տարվայ ամառը Ղուբա էր եկել Կայսերական Այգեգործական ընկերութեան կովկասեան բաժնի ներկայացուցիչ այգեգործ եւ պտղագործ Ա. Է. Կլաուսսէն։ Նա շրջեց Ղուբայի գաւառը եւ գտաւ, որ նա հարուստ է իր բուսականութեամբ եւ իր նպաստաւոր կլիմայով։ Պ. Կլաուսէնի ջանքերով այս տարի աշնանը ցուցահանդէս բացվեց պտղեղէնների, որի մասին մենք գրել ենք ժամանակին։ Նա այցելել է այնպիսի խոշոր կալուածքներ, ինչպէս են պ. պ. Ծատուրեանի, Դէբուրի եւ այլն։ Այդ տեղերում օրինակելի կարգ ու կանոնով է գընում գործը—գինեգործութիւնը, այգեգործութիւնը, մեղուապահութիւնը եւ մետաքսագործութիւնը։ Քանի որ այս տարի հիւանդութիւններ երեւացին ծառերի վրա, ուստի փիլոքսերային կոմիտէի ինտրուկտոր Բաշինջաղեան այստեղ էր, փորձեր արեց եւ շատ աջող փորձեր ծառերի վրա եւ բաւական նպաստեց, օգնեց այդ փորձերով այգիներին։ Ծատուրեանի գինին եւ իւղը ձեռնտու գներով ծախվում են Բագուում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թիւրքական լրագիրները հաղորդում են, որ ներկայ 1900 թւի ընթացքում Բօսնիայից գաղթել են Փոքր-Ասիա 5000 մահմեդական ընտանիքներ։ Նրանց բոլորին տրված են հողեր եւ սուլթանի հրամանով նրանք պէտք է օժանդակութիւն ստանան պետական գանձարանից այնքան ժամանակ, մինչեւ որ ծանօթանան տեղական պայմաններին եւ ոտքի կանգնեն։

—Լրագիրները համեմատում են միմեանց հետ Պարիզի այժմեան եւ նախկին երեք ցուցահանդէսների նիւթական արդիւնքները։ 1867 թւի ցուցահանդէսը 4 միլիոն ֆրանկից աւելի մնացորդ տուեց. նրա ծախքը 23 միլիոն էր, իսկ եկամուտը—27 միլիոնից աւելի։ Ընդհակառակը, 1878 թւի ցուցահանդէսը խոշոր դէֆիցիտ ունեցաւ. ծախքերը հաւասար էին 55 միլիոնի, իսկ եկամուտը ընդամենը 23 միլիոնի։ 1889 թւին եկամուտները հասան 49 միլիոն գումարի, իսկ ծախքերը 41 միլիոնի, ուրեմն մնացորդ եղաւ 8 միլիոն։ Այս տարվայ ցուցահանդէսից մնացած 2 միլիոն դէֆիցիտը բացատրվում է նրանով, որ զինուորական եւ ծովային մինիստրութիւնները, մասամբ նաեւ ուրիշ վարչութիւններ, հրաժարվեցին իրանց վրա առնել իրանց վերաբերեալ շինութիւնների ծախքերը։

—Լի-Խունգ-Զանգ խնդրել է գերմանական նաւատորմային ընկերութեան ներկայացուցչին հրատարակել գերմանական լրագիրներում այն փաստը, որ գերմանացի զինուորները, հակառակ զինուորական վարչութեան հրամանների, բռնի մտնում են չինացիների տները եւ կողոպտում են նրանց։ Եւրոպացիները այնքան շատ եւ այնքան արժէքաւոր իրեղէններ են կողոպտել Պեկինում, որ Լի-Խունգ-Զանգ հաւատացնում է, թէ կողոպտած իրեղէնները իրանց արժէքով ամենեւին պակաս չեն պետութիւնների պահանջած պատերազմական տուգանքից։

—«Leipziger Nachrichten» լրագիրը հաղորդում է, իբրեւ լուր, թէ գերմանական ազդեցիկ քաղաքագէտները կաշառված են Ռօզսի եւ այն ընկերութեան կողմից, որի պարագլուխն է նա։ «Рус. Вѣд.» լրագրին դեկտեմբերի 9-ից հեռագրում են այդ մասին, թէ գերմանական քաղաքագէտներին կաշառելու լուրը այստեղ հաւանական չէ համարվում։ «Kölniche Zeitung», որի սեփականատէրերին նոյնպէս մեղադրում են այն բանում, որ, իբր, նրանք վերցրել են Ռօզսից մօտ մի միլիոն, անուանում է այդ մեղադրանքը անազնիւ զրպարտութիւն եւ պահանջում է, որ մեղադրողը ապարէջ գայ եւ գործէ յայտնի։

—«Paris Nouvelles» հաղորդում է. «Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքէն ստացեր ենք «Վանայ նահանգին երկրագործական օժանդակ միութեան» ծրագիրը։ Այդ նորակազմ ընկերութեան նպատակն է. «Վանայ նահանգին ո եւ է ազգային դպրոցի կամ ազգային հաստատութեան մը օգնել նիւթապէս, որպէս զի երկրագործութեան տեսական եւ գործնական ճիւղը մշակվի հոն եւ աշակերտները զարգանան երկրագործութեան եւ գիւղատնտեսութեան նորագոյն մեթոդներով»։ Միջոցներուն վրա խօսելով կըսէ նոյն յայտագիրը. «Միութիւնն» այդ նպատակը գործադրելու համար պէտք է մատակարարէ այդպիսի դպրոցի կամ հաստատութեան համար կարող դասատուի, գործիքներու եւ այլ նիւթական պէտքերու ծախքը»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

14 դեկտեմբերի

ԿԱՊՇՏԱԴՏ։ Լուրերին նայելով՝ իմամներին ու մի հեծեալ զօրաբաժին, բօէրներին հալածելիս դէպի Բրեդստոուն, թակարդի մէջ ընկաւ եւ մեծ կորուստներ ունեցաւ. զօրաբաժնի մնացած մասը գերի է առնված։

ՇԱՆԳՀԱՅ։ Շէնսիի կաթոլիկ քահանաները հաղորդում են, թէ այրի կայսրուհուն պաշտպանում են միայն 3000 մարդիկ եւ թէ չինական արքունիքի անկեղծութեանը չէ կարելի հաւատալ։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, թէ երեք օրից յետոյ դէպի հարաւային Աֆրիկա կուղարկվի Նորզելանդեան երկրորդ զօրաբաժինը, թւով 200 մարդ. այս զօրաբաժինը կիսով չափ բաղկացած կը լինի մայեօրիսներից։

ՇԱՆԳՀԱՅ։ Դաստայ Շէնին յանձնարարված է մասնակցել այն բանակցութիւններին, որ չինական կառավարութիւնը վարում է պետութիւնների հետ։ Նա անյապաղ ճանապարհ կընկնի դէպի Պեկին։

ՊԵԿԻՆ։ Գերմանական զօրքերը Պաստինֆուից վերադառնալիս անխիղճ կերպով պատժում էին այն քաղաքները եւ գիւղերը, որոնցով քիչ ժամանակ առաջ անցել էին։ Պատիժները տեղի էին ունենում Վալդերզէէի եւ գեներալ Ռիչարդսօնի համաձայնութեամբ, որովհետեւ այդ գիւղերն ու քաղաքները անուշադիր էին թողել գեներալ Ռիչարդսօնի կարգադրութիւնները։ Սպանիական դեսպանը ենթադրում է, թէ չինական կառավարութիւնը անյապաղ կը համաձայնվի պետութիւնների պահանջների մեծ մասին. ինչ վերաբերում է բարձրաստիճան պաշտօնեաների պատիժներին, նրանք կարող են մի տարի տեւել։ Կոնջեր յայտնում է, թէ ոչ մի դեսպան պաշտօնապէս չէ ճանաչում այրի կայսրուհուն։ Լի-Խունգ-Զանգի կարծիքով, պետութիւնների միացած յայտագրի պատասխանը կը ստացվի տասն օրից յետոյ։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Կիտչներ հրատարակեց մի յայտարարագիր, որի մէջ ասված է, թէ այն բոլոր բօէրներին, որոնք կամաւորապէս անձնատուր կը լինեն, թոյլ է տրվում ապրել իրանց ընտանիքների հետ կառավարչական բանակատեղերում այնքան ժամանակ, մինչեւ որ երկրի դրութիւնը հնարաւորութիւն կը տայ վերադառնալ նրանց դէպի իրանց ծննդավայրերը։ Նրանց բոլոր գոյքերը կը պաշտպանվեն, եւ բէկվիզիցիաների ժամանակ նրանք կը ստանան վերցրած իրերի վարձատրութիւնը։

ԲՈՒԻԳԵՐՍԴՕՐՊ։ Գնդապետ Գէրնֆէլ հաստատում է մի զօրաբաժին, որ 700 մարդուց բաղկացած է համարվում։ Նա հաւատում թէ հասաւ զօրաբաժնի ետեւից, բայց բռնել չէ կարողանում։ Անցեալ երկուշաբթի օրը ուլանների 9-րդ գունդը կորցրեց ութը մարդ, որոնց թւում վիրաւորված է եւ պօրուչիկ Ֆրէդերիկ Բլէկվուդ, մարկիզ Դիւֆֆերինի որդին։—Կապի հօլանդացիները այլ եւս չեն միանում բօէրներին։

ՆԻԻԿԷՍՏԼ։ Այսօր վախճանվեց լորդ Ամստրանգ, յայտնի թնդանօթային գործարանի տէրը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրական մի փոքրաթիւ զօրաբաժին դեկտեմբերի 11-ին յարձակումն գործեց Բուրգերսդօրպի վրա, բայց կատաղի կռից յետոյ յետ մղվեց։ Թշնամին կրկնապատկված գործունէութիւն է ցոյց տալիս. զանազան տեղերից տեղեկութիւններ են ստացվում ընդհարումների մասին։

15 դեկտեմբերի

ՊԵԿԻՆ։ Կատարելապէս հաւաստի աղբիւրից յայտնի է, որ Լի-Խունգ-Զանգ եւ Ցին միացած յայտագրի հետ միասին ուղարկեցին դահին իրանց կարծիքի բացատրութիւնը, որով խորհուրդ են տալիս ընդունել առաջարկված պայմանները անյապաղ եւ առանց պատճառաբանների։ Հէնց այսպիսի խորհուրդ տալու փաստը արդէն նշան է, որ նրան անյապաղ կը հետեւեն։ Ապա, ինչպէս առում են, Լի-Խունգ-Զանգ եւ Ցին վճռել են խնդրել դաշնակից պետութիւնների զօրքերի աջակցութիւնը Պեկինի քաղաքացիական վարչութիւնը վերակազմելու համար։ Այդ միջնորդութիւնը անյապաղ կը յայտնվի, հէնց որ դահը համաձայնութիւն տայ պետութիւնների կողմից տրված պահանջներին։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորական ժողովը քննադատեց չինական արշաւանքի լրացուցիչ կրեդիտը եւ այդ նպատակի համար հաստատեց կառավարութեան 25 միլիոն ֆրանկի առաջարկը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենների հեռագիրը Պրեսորիայից. «Գեներալ Նոկս կուռում է Դէվէտի զորքերի դէմ, որոնք դիրք են բռնել Լէուվկոպի մօտ։ Դէվէտ յոյս ունի կարել զօրագիծը եւ անցնել դէպի հարաւ։ Անգլիացիները, ըստ երեւոյթին, կարել են բօէրների արեւելեան զօրաբաժնի առաջը Կապի գաղթականութեան մէջ, Ռէյտսպօրտսպրոյտի մօտ։ Արեւմտեան զօրաբաժինը, ինչպէս հաղորդում են, գնաց դէպի հիւսիս, բաժանվելով երկու մասի, որոնցից մէկը ուղեւորվեց դէպի Պրիէսկ, իսկ միւսը անցաւ Ստիդէնբուրգով. անգլիացիները հալածում են նրանց։

ԼՕՆԴՕՆ։ Կեռչենները հաղորդում է Պրեսորիայից հետեւեալը. «Բօէրները երէկ գիշեր յարձակում գործեցին Ուտրէխտի վրա, բայց յետ մղվեցին երկու մարդու կորուստով. մեր կողմից վիրաւորված է մի մարդ։ Բօէրները կանգնեցրին գնացքը արեւելեան երկաթուղային գծի վրա, Պանի մօտ, բայց յետ մղվեցին օգնութեան հասած զօրքերի միջոցով կորցնելով 8 մարդ, որոնցից մէկը սպանված է. մեզանից սպանված է եւ վիրաւորված են 4 հոգի։ Կապի գաղթականութեան մէջ բօէրների արեւելեան զօրաբաժինը երէկ ջարդվեց եւ հալածվեց դէպի Վէնտէրսա, իսկ արեւմտեան զօրաբաժինը—դէպի հիւսիս»։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, որ Պրիէսկի մօտ գերի առնված եօմանրիները, բօէրներին հասնելու ժամանակ, ազատ են թողնված, երբ նրանցից խլեցին ձիերը, թամբերը եւ զէնքերը։ Բօէրները եօմանրիների կողմից ծանր կորուստներ են կրել. վիրաւորված են տասը մարդիկ, որոնց թւում եւ մէկ գնդապետ։

ՏԵԱՆՋԻՆ։ 1,100 մարդուց բաղկացած անգլիական զօրքը երկու թնդանօթներով, գեներալ Կեմբինսի հրամանատարութեամբ, գնում է դէպի Եանտուան «մեծ-բռունցքների» դէմ գործելու եւ երկաթուղին պաշտպանելու համար։ Խօսքը հէնց այն «Մեծ-բռունցքների» մասին է, որոնց ֆրանսիացիները ջարդեցին Խէնաուի մօտ։ Տեանձինի եւ Տակուի միջեւ գտնվող գետի մօտ նոյնպէս դաշնակից զօրքերը գործում են «Մեծ-բռունցքների» եւ գեստհէների դէմ։

ՊԱՐԻԶ։ Գնդապետ Պիկար դիմեց Վալդէկ-Ռուսսօին մի նամակով, որի մէջ բողոքում է այն բանի դէմ, որ իր անունը մտցրել են սենատի հաստատած ներման վերաբերեալ օրէնքի մէջ։ Նա հրաժարվում է ներումից, որը բարձրաձայն խախտում է արդարադատութիւնը։ Նա չէ ցանկանում, որ իր պատիւը վերականգնված լինի ներման միջոցով։

ՊԷԿԻՆ։ Վաղը Պէկինից ուղեւորվում են ամէրիկեան զօրքեր՝ տեղացի քրիստոնեաներին այրելու համար պատժելու նպատակով։

ՊԷԿԻՆ։ Ցին եւ Լիլոունգչանգ տեղեկութիւն ստացան կայսրից։ Ցին այցելեց Լիլոունգչանգին։ Պալատը լուրջ առարկութիւններ արեց մարակոցները քանդելու, նոյնպէս եւ մշտական պաշտպանողական զօրքեր թոյլ տալու դէմ միսիոնների համար, որոնք, պալատի կարծիքով, ամեն ժամանակ կարող են բաւական զօրեղացնվել։ Այդ պահանջը դրվում է միմիայն պալատին սպառնալու նպատակով։ Խորհրդակցելուց յետոյ, Ցին եւ Լիլոունգչանգ վճռեցին կրկին անգամ բանակցութիւններ սկսել պալատի հետ դեսպանների հետ պատահելուց առաջ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՑԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանի տանը, Գուդովիչի փողոցի վրա,

ՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԱՐՁՈՎ

միջին եւ ներքին յարկերում, առաջինը տասսենեակներից բաղկացած, երկրորդը՝ տասնմէկ։ Գնի մասին դիմել Հաջի-Մամէդ-Բաղր Ռիզաեվին, Սիօնի փողոցի վրա, Զիթախօզի քարավանսարայում։ (Ե. Հ. Չ.) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։ Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 5—7 ժ.։ Վելիամինսկայա փողոց, տ. № 24։ (Ե. Չ. Չ.) 16—20

Կիրակի, դեկտեմբերի 17-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺԱՂՈՎԱՐԱՆՈՒՄ,
ՑՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Արքունական թատրոնի բալետային խմբի մասնակցութեամբ տեղի կունենան զանազան բնորոշ պարեր, իսկ անտրակտներին երաժշտութիւն կը լինի։
Սկիզբն է 9 ժամին։
Տոմսակի գինն է 2 ր. 10 կոպ.։
3—2

ՀՐԱՒԷՐ

Այսօր 17-ին, կիրակի օրը, առաւօտեան 9 ժամին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում կրկին լինելու է ծխականների ժողով, քահանայարդի Երուանդ Տէր-Բարսեղեան Տէր-Բարսեղեանցին հոգեւոր կոչման մէջ ընդունելու համար հաստատական կարդալու, ուստի սրանով պատիւ ունեմ հրաւիրել յիշեալ եկեղեցու պ.պ. ծխերին՝ ներկայ լինել ժողովին մասնակցելու։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝
3—3 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

ԹԻՖԼԻՍԻ
ՆԱԽԹԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ հաստատված հոկտեմբերի 22-ի կայացած ընդհանուր ժողովի որոշման, նշանակվում է արտակարգ ընդհանուր ժողով ապառիկայ 1901 թուի յունվարի 14-ին, կիրակի, ժամի 11-ին, քաղաքային դումայի դահլիճում, ուր պիտի ընտրվեն հինգ դիրեկտորներ։ 2—3

ԿՕՆՑԷՐՏ

Դաշնակահար Ս. Ն. ԵԱԿԻՄՕՎՍԿՈՒ
մասնակցութեամբ երգչուհի
Լ. Ֆ. ՖԵՐՏԻԳԻ

Թիֆլիսի ժողովարանի շինութեան մէջ կը տայ կոնցէրտ, դեկտեմբերի 16-ին։ Բօեալ Բէկէրի։
Տոմսակները ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ, ամեն առաւօտեան 11-ից մինչեւ 3 ժամը եւ երեկոյեան ժամը 7-ից։ 4—4

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՖԻՖԼԻՍԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղամառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազարում։ Սան Միքայելեան կամուրջի վրա, Զապօվի և Աբիսալովի դեղատներում։ Օտարքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատոմով։
27—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խմբագրատան դասարանի աշակերտներ՝ Ս. Ա. Ա. Ա